ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

N 073-135

0231-6-09-36

15 օգոստոսի 2012թ.

գ.Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի պատասխան Ձեր 2012 թվականի հուլիսի 19-ի թիվ 01/07.1/2363-12 գրության ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի օգոստոսի 15-ի թիվ 27 որոշումը:

Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

7456-12
24 08 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

15 օգոստոսի 2012թ. Թիվ 27

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի ԹԻՎ 34 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանի 2012 թվականի հուլիսի 19-ի թիվ 01/07.1/2363-12 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի 2009 թվականի հունիսի 23-ի << <<Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման>> հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին>> թիվ 34 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 8-րդ կետում <<մասնակիցներին >> բառը փոխարինել <<մրցույթի մասնակիցներին (այսուհետ՝ մասնակիցներ)>> բառերով.

2) N1 հավելվածի 10-րդ կետի <<ե>> ենթակետում <<մրցույթի մասնակիցների (այսուհետ՝ մասնակիցներ)>> բառերը փոխարինել <<մասնակիցների>> բառով.

3) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 6-րդ կետում <<մրցույթի>> բառը փոխարինել <<ատեստավորման>> բառով.

4) N 2 հավելվածի 8-րդ և 15-րդ կետի<<գ>> ենթակետում <<մասնակիցներին>> բառը փոխարինել <<ատեստավորվող համայնքային ծառայողներին>> բառերով.

5) N 2 հավելվածի 10-րդ կետի <<ե>> և <<ի>> ենթակետերը ուժը կորցրած ճանաչել.

6) N 2 հավելվածի 16-րդ կետում <<համայնքի ղեկավարին եզրակացություն տալու պահից>> բառերը փոխարինել <<ատեստավորման արդյունքները հրապարակվելու պահից>> բառերով.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի օգոստոսի 15
գ. Արշալույս